

21. Թատերահանդիսային գործունեություն

2002թ. հանրապետությունում գործել են 21 թատերահանդիսային կազմակերպություններ, որոնցից 12-ը՝ դրամատիկական, 4-ը՝ երաժշտադրամատիկական, 3-ը՝ տիկնիկային, մնացած 2-ը՝ պատանի հանդիսատեսի թատրոնն է և հայպետրկեսը:

Երևան քաղաքում գործել են 14, Շիրակի և Սյունիքի մարզերում՝ 2-ական, Արարատի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում՝ 1-ական թատերահանդիսային կազմակերպություններ:

Թատերահանդիսային կազմակերպությունների կողմից 2002թ. ցուցադրվել է 1415 (2001թ.՝ 1527) ներկայացում, որոնց 25.6%-ը կամ 362-ը՝ տիկնիկային, իսկ 14.3%-ը կամ 203-ը՝ երաժշտադրամատիկական ժանրի են: Արարատի և Գեղարքունիքի մարզային թատրոնները ներկայացումներ են կազմակերպել նաև իրենց մարզերի գյուղական համայնքներում: Արտասահմանում հյուրախաղերով հանդես է եկել 1 թատերային կազմակերպություն, որի ներկայացումների քանակը կազմել է 14:

2002թ. թատրոններ հաճախումների քանակը 2001թ. համեմատ նվազել է 28.4 հազարով և կազմել 279.3 հազ., նրանց 17.4%-ը հաճախել է երաժշտադրամատիկական, 9.6%-ը՝ տիկնիկային թատրոններ: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 87:

2002թ. պատրաստվել և հանդիսատեսին է ներկայացվել 54 նոր (2001թ.՝ 36) և 11 հիմնավերականգնված (2001թ.՝ 6) ներկայացում:

Թատերական ներկայացումներից ստացված հասույթը կազմել է 104.6 մլն. դրամ, որի 1.0%-ը կամ 1.1 մլն. դրամը ստացվել է գյուղական համայնքներում կազմակերպված ներկայացումներից, 18.7%-ը կամ 19.6 մլն. դրամը՝ երաժշտադրամատիկական, 5.1%-ը կամ 5.3 մլն. դրամը՝ տիկնիկային ներկայացումներից: Միջին հաշվով մեկ ներկայացման մուտքի վճարումներից հասույթը կազմել է 73.9 հազ. դրամ, ընդ որում գյուղական համայնքներում այդ ցուցանիշը կազմել է 14.1 հազ. դրամ:

Թատերահանդիսային կազմակերպությունների ընդհանուր ֆինանսական միջոցները 2002թ. կազմել են 682.8 մլն. դրամ, որի 75.9%-ը կամ 518.2 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից, 15.3%-ը (104.6 մլն. դրամ)՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից, 2.3%-ը (15.9 մլն. դրամ)՝ վարձակալությունից, 0.9%-ը (6.3 մլն. դրամ)՝ նվիրատվություններից, 5.6%-ը (37.8 մլն. դրամ)՝ այլ եկամուտներից:

Թատերահանդիսային կազմակերպությունների ֆինանսական ընդհանուր ծախսերը կազմել են 674.9 մլն. դրամ, որի 48.7%-ը կամ 328.4 մլն. դրամը՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումներն է, 18.5%-ը (124.9 մլն. դրամ)՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, 8.1%-ը (54.7 մլն. դրամ)՝ ոչ նյութական ծառայությունների վճարումները, 7.4%-ը (49.8 մլն. դրամ)՝ նյութական ծախսերը, 5.6%-ը (37.9 մլն. դրամ)՝ գործուղման ծախսերը, 0.8%-ը (5.2 մլն. դրամ)՝ հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսերը, 10.9%-ը (73.9 մլն. դրամ)՝ այլ ծախսերն են: Միջին հաշվով մեկ ներկայացման ֆինանսական ծախսերը 2002թ. կազմել են 521 հազ. դրամ:

Պետական մասնագիտացված թատրոններն ըստ ենթակայության և ըստ մարզերի, 2002թ.

	Թատրոնների քանակը	այդ թվում՝ ըստ ենթակայության	
		ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	համայնքներ
ք.Երևան	14	12	2
Շիրակ	2	1	1
Լոռի	1	1	-
Արարատ	1	-	1
Գեղարքունիք	1	-	1
Սյունիք	2	-	2
Ընդամենը ՀՀ	21	14	7

Պետական մասնագիտացված թատրոնների գործունեությունն ըստ մարզերի, 2002թ.

	Ներկայացումների քանակը	Ներկայացումների քանակը մեկ կազմակերպության հաշվով	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
ք.Երևան	1099	79	223.2	203	96033.6	87.4
Շիրակ	95	48	11.4	120	2402.3	25.3
Լոռի	30	30	3.2	107	48.0	1.6
Արարատ	49	49	8.4	171	1977.7	40.4
Գեղարքունիք	99	99	20.5	207	3595.1	36.3
Սյունիք	43	22	12.6	293	591.2	13.7
Ընդամենը ՀՀ	1415	67	279.3	197	104647.9	74.0